ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Ուսանողների և երիտասարդների օրվա կապակցությամբ

16.05.2025

«Սիրելի՛ ուսանողներ, երիտասարդներ,
Սրտանց շնորհավորում եմ ձեզ Ուսանողների և երիտասարդության օրվա կապակցությամբ:
Ժամանակակից աշխարհում գիտելիքը, կրթությունն ու ստեղծագործ միտքը դարձել են ամենաթանկ կապիտալը: Ուստի կոչ եմ անում ձեզ լինել ուսումնատենչ, ակտիվ և նախաձեռնող: Մեր պետության ապագան կախված է ձեր գիտելիքներից, արժեքներից, հայրենասիրությունից և պատասխանատվության զգացումից:
Ուսանողական տարիները՝ լի ուսումնառությամբ, փորձություններով ու մեծ երազանքներով, հիմքն են ձեր՝ որպես անձի ու քաղաքացու կայացման: Այդ տարիներին ձևավորվում է ոչ միայն մասնագիտական ուղին, այլ նաև մարդկային արժեքները, սկզբունքները և առաքելությունը:
Մենք՝ պետությունն ու հասարակությունը, պարտավոր ենք հնարավոր բոլոր պայմանները ստեղծել, որպեսզի դուք կարողանաք լիարժեք զարգանալ և իրականացնել ձեր ներուժը:
Մեկ անգամ ևս շնորհավորում եմ ձեզ այս գեղեցիկ տոնի առթիվ, մաղթում՝ առողջություն, նորանոր ձեռքբերումներ, վճռականություն և անսպառ եռանդ»: